ԳԼՈՒԽ Թ
ՕՀՄՆԱՎԱՆՔԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես ասացինք, բոլոր ծառաներով՝ առաջին Զաքարիայի գալուստի մասին: Սա Սարգիս անունով մի ծառա ևս ուներ Աժդահակի ցեղից, որին Վաղուտանց էին կոչում: Եվ նա սերեց մի որդի, որ անվանվեց Վաչե: Սա սերվեց Զաքարեից: Այս Սարգիսը ապրեց մինչև վերջին Զաքարիան: Նա Զաքարիայի և նրա տան հավատարիմը եղավ: Եվ իր հավատարիմ ծառայության համար նրան նշանակեց իշխանաց իշխան և տվեց նրան մեծություն և ամբողջ Արագածոտնի, Շիրակի, Նիգի, Անբերդի և նրա ամբողջ եզերքների իշխանությունը մինչև Երասխաձոր: Հրամայեց շինել եկեղեցիներ ու վանքեր, որ վերևում ասացինք:

Նախ և առաջ (շինեց) Օհանավանքի հրաշափառ մենաստանը՝ կից Սուրբ Կարապետի անունով հին եկեղեցին: Իսկ մեծն Վաչեն քանդեց փայտե գավիթը հարավային կողմից, երկու դուռը խցեց և մեկը՝ թողեց: Ապա սկսեց շինել հաստ ու երկայն քարերով՝ կարմիր ու սև կոփածո: Չորս սյուներ չորս կողմերում, որոնց վրա չորս կամարներ՝ սև և երկայն, և կամարները՝ նրանց վրա սև ու կարմիր: Հարավային կողմում երկու գեղեցկաշեն գրաբեմեր: Ավագ խորանի գլխին մի շարք կարմիր քար, մի շարք սև քար: Բեմի մեջտեղում աստղանման խորաքանդակ: Իսկ արևմտյան թևում և առաստաղում մի շարք սև, մի շարք կարմիր (քարեր)՝ փառավոր ագուցված, գեղեցիկ հարմարված: Չորս լուսամուտ կա հարավային կողմում՝ երեքը բոլորակ, մեկը՝ երկայն: Մի լուսամուտ ունի ավագ խորանը և երեքը արևմտյան կողմում՝ մեկը բոլորակ, մյուսը երկայն, չորս լուսամուտ ունի գմբեթը: Երկու խորան կա ավագ խորանի աջից ու ձախից, ուր քարե աստիճաններով են բարձրանում: Երկու ուրիշ նրանց ներքևում, երկու արևմտյան կողմում դռան աջից ու ձախից: Երկու այլ լուսամուտներ նրանց վերևում են, ուր բարձրանում են տասնմեկ քարե աստիճաններով: Իսկ ավազանը ըստ պատշաճի հյուսիսային կողմում է: Մի դուռը արևմուտքում է, մյուսը հին եկեղեցու մեջ, հյուսիսային կողմում:

Բոլոր խորանները յուրաքանչյուրը ունի մի լուսամուտ, իսկ սեղանը կառուցված է պատարագի տեղում: Դրսի կողմից երկու քիվ, հարավային կողմից գեղեցիկ տաշված: Երկու (լուսամուտ) էլ արևելյան կողմում, արևելյան թևում աղյուսաձև կարմիր և սև քար, սրա ներքևը ինչպես կշեռք լուծը և թաթերը միաչափ են: Հարավային կողմում լուսամուտի վրա կա խաչ, արևմտյան կողմում նույնպես: Սալաթոռները փորած նկար են, թե չորս թևերը, թե չորս սրունքները, թե գդակի տակը (փորած նկարներ են): Իսկ բոլորքով քարերը տափակ, իսկ գմբեթի պարանոցն ունի տասնմեկ սյուն: Նույնպես գլխարկը ունի տասնմեկ ելևէջ, իսկ խաչաթոռը նման է կենդանիների չորս կերպերին, նրա վրա աստվածընկալ խաչն է մեր հոգիների փրկության համար: Ավարտվեց վեց հարյուր վաթսունվեց (1217) թվին և օրհնվելով անվանվեց Սուրբ Կաթողիկե՝ գեղեցիկ ու հիացնող տեսնողներին և խորան ու տաճար բնակարան Աստծու որդու փառքին, որտեղ պատարագվում է Աստծու գառ Քրիստոսը:

Ինքը իշխան Վաչեն վախճանվելով դրվում է եկեղեցում՝ գրաբեմի առաջ, խորանի դռանը, հարավային կողմում, որին թող հանգիստ ու արքայություն պարգևի հավիտյան օրհնյալ Քրիստոսից, ամեն:

Նրա աթոռը գրավեց նրա որդի Քուրդը Շահնշահի հրամանով:

ԳԼՈՒԽ Ժ
ԳԱՎԹԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այն օրը հոների երկրից ելավ նետողների ազգը, որ կոչվում են թաթարներ և տիրեցին Հայաստանին ու Վրաստանին: Նվաստացավ նաև վրաց թագավորությունը, որ մի կնոջ ձեռքում էր, որի անունն էր Ռուզաքան: Սա վերևում հիշված Թամարի և Լաշայի եղբոր դուստրն էր՝ վրաց Գեորգի թագավորի թոռը: Երբ տեսավ, թե չի կարող դիմադրել նրանց, իր երկիրը հանձնում է Շահնշահին, իսկ ինքը փախչում է Աբխազիա: Իսկ Շահնշահը կամա թե ակամա հնազանդվում է նետողների ազգին և հաճոյանում է նրանց:

Եվ իսկույն հրամայում է իր ծառա Քրտին, որ նրա կողմից իշխան էր նշանակված հոր տեղը, որպեսզի գավիթ շինի եկեղեցիներին կից, որ իր հայրը շինել էր: